

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հուլիսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում բարձր է եղել նորմայից 2-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 30-ին և 31-ին. Տավուշում գրանցվել է +35...+37^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +39...+41,5^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +36...+38^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34^{0}C, Շիրակում՝ +31...+36^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +30...+34^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +36...+38^{0}C, Գեղարքունիքում՝ +29...+32^{0}C, Լոռիում՝ +30...+34^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +39...+41,5^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +31...33^{0}C, նախալեռներում՝ +36...+40^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 26-28-ն ընկած ժամանակահատվածում. Շիրակում գրանցվել է +12...+14^{0}C (Աշոցք՝ +6^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +13...+15^{0}C (Հանքավան՝ +8^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +17...+19^{0}C, Տավուշում +17...+19^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +10...+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19...+21^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +18...+23^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +10...+15^{0}C, Գեղարքունիքում՝ +9...+14^{0}C (Գավառ՝ +8^{0}C), Լոռիում՝ +11...+15^{0}C (Տաշիր՝ +9^{0}C), Արմավիրում՝ +16...+20^{0}C, Արարատում՝ +18...+21^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +8...+11^{0}C, նախալեռներում՝ +16...+21^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 2-4մմ (13-23%), Լոռիում՝ 3-33մմ (15-174%), Տավուշում՝ 0.6-5մմ (7-26%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ Ծաղկահովիտում 13մմ-50%, նախալեռներում՝ 2-3մմ (33-43%), Գեղարքունիքում՝ 1-31մմ (5-172%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0.4-14մմ (2-70%), նախալեռներում՝ 2մմ (25%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 23մմ (153%), նախալեռներում տեղումներ չեն դիտվել, Արմավիրում՝ 08-16մմ (20-267%), Արարատում՝ 0.1-1մմ (2-25%), Սյունիքում տեղումներ դիտվել են միայն Սիսիանում՝ 0.5մմ (6%):



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հուլիսի 26-ին և 27-ին. լեռնային շրջաններում՝ +6...+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +10...+15^{0}C, հովտային շրջաններում՝ +17....+22^{0}C:



Տասնօրյակի ընթացքում դիտված բարձր ջերմային ֆոնի, տեղումների սակավության հետևանքով մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարներն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել են 2-6%-ով:

Լեռնային շրջաններում 20սմ խորության վրա կազմել են 13-30%, նախալեռնային շրջաններում՝ 14-35%, հովտային շրջաններում՝ 11-25%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-35%, նախալեռնային շրջաններում՝ 16-40%, հովտային շրջաններում՝

Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակել է մշակաբույսերի հասունացումը:

Հովտային շրջաններում սկսվել է խաղողի հասունացումը, կատարվել է բանջարանոցային մշակաբույսերի և ձմերուկի բերքահավաք: Շարունակվել է ծխախոտի տերևների հասունացումը, կատարվել է տերևաքաղ:

Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի և պտղատուների հասունացումը:

Պտղատուների մոտ տեղի է ունենում շաքարային նյութերի կուտակում:

Լեռնային շրջաններում կատարվել է հացահատիկային մշակաբույսերի բերքահավաք:

Բուսականության սթրեսի ինդեքս

Հուլիսի երրորդ տասնօրյակում հանրապետությունում գրանցված բարձր ջերմային ֆոնը, տեղումների սակավությունը և օդի ցածր հարաբերական խոնավությունը բացասաբար կանդրադառնա բերքի քանակի և որակի վրա: Բոլոր մշակաբույսերը լրացուցիչ ոռոգման կարիք ունեն:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ